



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 23-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009Թ. ԱՊՐԻԼԻ 21-Ի «ԴԱՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԹԻՎ 06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. ապրիլի 21-ի «Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման հավելվածում /այսուհետ՝ հավելված/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Հավելվածի 32-րդ կետում նշված «32» թիվը փոխարինել «32.1-32.2» թվերով.

1.2. Հավելվածի 32-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրում՝

1.2.1. Պաշտոնի անձնագրի ծածկագրի «32» թվից հետո ավելացնել «.1» թիվը.

1.2.2. Նույն կետը նախատեսող պաշտոնի անձնագրի 2-րդ բաժնի 5-րդ կետում «պետը» բառից հետո ավելացնել «կամ Գրասենյակի մյուս գործավարը» նախադասությունը.

1.2.3. Նույն բաժնի 5.1-րդ կետում «պետի» բառից հետո ավելացնել «կամ Գրասենյակի մյուս գործավարի» նախադասությունը, իսկ «նրան» բառը փոխարինել «նրանց» բառով.

1.3. Հավելվածի 28-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի 2-րդ բաժնի 4-րդ կետում նշված «գործավարը կամ այլ դատական ծառայող» բառերը փոխարինել «գործավարներից մեկը» բառերով.

1.4. Հաստատել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավարի N32.2 պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի.

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 01-ից:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**

17 դեկտեմբերի 2013թ.  
ք. Ստեփանակերտ